# ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Ողորմութեամբն Աստուծոյ Մենք, Նիկոլայ Երկրորդ, Կայսր և Ինքնակալ համայն Ռուսիոյ, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի և այլն և այլն։ Յայտարարում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին։ Աստուածային Նախախնամութեան հաճութեամբ, բարձրանալով Մեր նախահայրերի դահը, Մենք սրբազան ուխտ արինք Ամենաբարձրեալի և Մեր խղճի առաջ Ռուսիոյ պետութեան դարաւոր հիմունքները սրբութեամբ պահպանելու և Մեր կեանքը սիրեցեալ հայրենիքի ծառայութեան նուիրելու։

Մեր հպատակների մասին ունեցած անդուլ հոգացողութեանց մէջ, Մենք ժողովրդի բարեկեցութեան իրագործման միջոցները ձեռք ենք բերել Մեր Ինքնակալ նախորդների, և ամենից առաջ Մեր անմոռանալի Ծնողի յաւերժ յիշատակութեան արժանի խոհուն գործերի հետեւողութեամբ։

Ամենակալ Աստուծուն հաճելի էր, Իւր անհասանելի կամքով, ընդհատել վաղաժամ մահով Մեր սիրեցեալ Ծընողի պետական աշխատանքները և դրանով Մեզ վրայ սրբազան պարտականութիւն դնել, լրացնելու Ռուսաց երկրում կարգն ու արդարութիւնն և ամրացնելու նրա սկսած գործը, համապատասխան ժողովրդի կեանքի մէջ ստեղծուող պահանջներին։

Ի մեծ վիշտ Մեր, այն խառնակութիւնը, որ սերմանուած է մասամբ պետական կարգ ու կանոնին թշնամական միտումներով, մասամբ էլ ռուսական կեանքին

օտար սկզբունքներից յափշտակուելով, արդեւք է հանդիսանում այն ընդհանուր աշխատանքին, որ ուղղուած է դէպի ժողովրդի կեանքի բարօրութեան և բարելաւման գործը։ Այդ խառնակութիւնը, յուղելով մտքերը, շեղում է նրանց արդիւնաւէտ գործից և յաճախ կորստի է մատնում Մեր սրտին սիրելի և իրենց ծնողներին ու հայրենիքին անհրաժեշտ երիտասարդ ոյժերը։ Պահանջելով Մեր բոլոր, ինչպէս բարձրաստիճան, այնպէս և ստորին կամակատարներից, որ հաստատուն կերպով դիմադրեն ժողովրդական կեանքի կանոնաւոր ընթացքի ամէն մի խանգարման, և յուսալով, որ ամէնքը և իւրաքանչիւր ոք աղնուաբար կկատարեն իրենց ծառայական պարտքը, Մենք՝ անյողդողդ վճռականութեամբ, անյապաղ դադարեցնում տալու պետութեան հասունացած կարիքներին, բարւոք համարեցինք, որ հաւատոյ գործերի հետ առնչութիւն ունեցող իշխանութիւններն աննկուն կերպով պահպանեն Ռուսաց կայսրութեան հիմնական օրէնքների մէջ գրուած համբերատարութեան սկզբունքները, որոնք, ջերմեռանդութեամբ պաշտելով ուղղափառ եկեղեցին, իբրև նախամեծար և տիրող եկեղեցի, Մեր բոլոր այլակրօն և այլադաւան հպատակներին ազատութիւն են տալիս դաւանելու իրենց կրօնը և կատարելու իրենց ծէսերն ըստ իրենց կրօնի. շարունակեն եռանդուն կերպով գործադրել այն միջոցները, որոնք ուղղուած են գիւղական ուղղափառ հոգևորականութեան նիւթական վիճակը բարելաւելուն, ուժեղացնելով սրբակրօն պաշտօնեաների իրենց հօտի հոգևոր և հասարակական կեանքի մէջ ունեցած արդիւնաւէտ մասնակցութիւնը. ժողովրդական տնտեսութեան գործերի զօրացման վերաբերմամբ եղած խնդիրներին համապատասխան կերպով առաջ տանեն պետական վարկի հաստատութիւնների, մանաւանդ աղնուականների և գիւղական բանկերի գործունէութիւնը, որպէս զի աւելի ուժեղ կերպով ամրապնդուի և զարգանայ ռուսաց գիւղական կեանքի հիմնական տարրերի—տեղական աղնուականութեան և գիւղացիների՝ բարօրութիւնը.

գիւղական վիճակին վերաբերեալ օրէնսդրութեան վերաքննութեան մասին Մեր ծրագրած աշխատանքները, Մեր ցոյց տուած կարգով կանխօրէն կատարելուց յետոյ, ուղարկեն նահանգական խորհուրդներին՝ մշակելու համար այդ աշխատանքները տեղական առանձնայատկութիւնների համաձայն, հասարակութեան վստահութիւնը վայելող արժանաւորագոյն գործիչների մասնակցութեամբ. այս աշխատանքներին իբրև հիմք դնեն գիւղական հողատիրութեան համայնական կազմի անձեռնմխելիութիւնը, միևնոյն ժամանակ միջոցներ որոնելով դիւրացնելու համար առանձին գիւղացիների համայնքից դուրս գալը. անյապաղ միջոցներ ձեռք առնեն վերացնելու գիւղացիներին ճնշող ֆիզիկական երաշխաւորութիւնը. վերակազմեն նահանգական և գաւառական վարչութիւնները, որպէս զի զեմստվային կեանքի բազմապիսի կարիքներին անմիջապէս գոհացումն տալու միջոցները ուժեղացուին տեղական գործոնների աշխատանքներով, որոնց պիտի զեկավարէ զօրեղ և օրինաճանաչ իշխանութիւնը՝ խիստ պատասխանատու լինելով Մեր առաջ. տեղական կենցաղը կանոնաւորելու համար նպատակ դնեն հասարակական վարչութեան մերձեցումը ուղղափառ եկեղեցիներին կից գտնուած ծխական հոգաբարձութիւնների գործունէութեանն՝ այնտեղ, ուր այդ կարելի է։

Կոչումն անելով Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին նպաստել Մեզ՝ ընտանիքի, ուսումնարանի և հասարակական կեանքի մէջ հաստատելու բարոյական հիմունքներ, որոնցով միայն, Միահեծան իշխանութեան հովանու տակ, կարող են զարգանալ ժողովրդի բարօրութիւնը և իւրաքանչիւրի վստահութիւնն իւր իրաւունքների ամրութեան վերաբերմամբ, Մենք հրամայում ենք Մեր նախարարներին և առանձին մասի կառավարիչներին, որոնց իրաւասութեանը վերաբերում է այս, ներկայացնել Մեզ իրենց դիտողութիւնները Մեր ծրագրների կատարման կարգի մասին։

Ամենակալ Տէրը թող օրհնէ Մեր Աչքայական աշ-

խատանքը, և թող օգնէ նա Մեզ՝ հայրենիքի բոլոր հաւատարիմ զաւակների սերտ միութեամբ կատարելու Մեր խորհուրդները՝ պետական կարգը կատարելագործելու, սահմանելով տեղական կեանքի հաստատուն կազմ, իբրև գլխաւոր պայման Մեր պետութիւնը ծաղկեցնելու՝ հաւատոյ, օրէնքի և իշխանութեան ամուր հիմքերի վերայ։

Տրուած է Ս. Պետերբուրգում, փետրուարի 26-ը՝ օրը, Քրիստոսի ծննդեան հազար ինն հարիւր երեք թուին, Մեր թագաւորութեան ինն երորդ տարում։

Իսկականի վրայ նորին Կայսերական Մեծութեան սեփական ձեռքով ստորագրուած է՝ ՆԻԿՈԼԱՈՍ։

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## Մկրտիչ ծանուցեալ Յիսուսի Քրիստոսի եւ անհամբեցելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի

Գերաշնորհ Տ. Գէորգ Եպիսկոպոսի, Առաջնորդի վիճակին Եւրոպիոյ, հոգեւոր որդւոյ Մերոյ և հարազատի Մայր Աթոռոյս, Հայրապետական ողջունիւ յայտ առնեմք։

Տ. Թադէոս Քահանայ Փափազեան, ընիկ Ղրնճըլարցի, նախկին պաշտօնեայ ս. Եկեղեցւոյն Աղէքսանդրիոյ, զորոյ զգայթակղեցուցիչ վարուց և զանուղղայ ընթացից ի վաղ ժամանակաց հասեալ էին Մեզ տեղեկութիւնք՝ տակաւին ի 1884—85 ամաց հետէ, մինչդեռ գտանէր ի Տարտանել և